

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-Ի ԿԱՅՔՈՒՄ ԱՆՁՆԱԿԱՆ ԷՋԻ ԲԱՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Ընդհանուր դրույթներ

- 1.1. Սույն պայմաններով (այսուհետ՝ Պայմաններ) կարգավորում են «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ www.ameriabank.am ինտերնետային կայքէջում «անձնական էջի» («profile») բացման, սպասարկման, օգտագործման ու դրա միջոցով վարկային և դրան հարակից բանկային ծառայություններից օգտվելու հետ կապված հարաբերությունները:
- 1.2. Ձեր անձնական էջը համացանցի միջոցով վարկային ծառայություններից օգտվելու համակարգ է: Այն հնարավորություն է տալիս հեռահար եղանակով Բանկ ներկայացնել վարկ ստանալու հայտ, վարկի ստացման համար անհրաժեշտ տեղեկություններ, տեղեկանքներ, համաձայնություններ և այլ փաստաթղթեր, ստանալ Բանկի դիրքորոշումը վարկ տրամադրելու կամ մերժելու վերաբերյալ, կնքել վարկային պայմանագրեր: Բանկի և հաճախորդի միջև վարկավորման շրջանակներում հաղորդակցումն իրականացվում է սույն համակարգի միջոցով:

2. Անձնական էջի ստեղծում և օգտագործում

- 2.1. **Անձնական էջ ստեղծելու համար** պետք է լրացնեք Կանոնների 2.2 կետում նշված Ձեր անձնական տվյալները և ստեղծեք Բանկի կողմից սահմանված նվազագույն անվտանգության պայմաններին բավարարող գաղտնաբառ: Այնուհետև Ձեր նշած բջջային հեռախոսահամարին կամ էլեկտրոնային հասցեին Բանկի կողմից կուղարկվի հաղորդագրություն, որում նշված կողն անհրաժեշտ է մուտքագրել համակարգում անձնական էջն ակտիվացնելու/հաստատելու համար:
- 2.2. Անձնական տվյալներն են՝
 - 2.2.1. Ֆիզիկական անձանց համար՝
 - անուն ազգանուն՝ անգլերեն լեզվով,
 - էլեկտրոնային փոստի հասցե,
 - հանրային ծառայության համարանիշ (սոցիալական քարտի համար),
 - բջջային հեռախոսահամար:
 - 2.2.2. իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար՝
 - անվանում՝ անգլերեն լեզվով,
 - ՀՎՀՀ,
 - էլեկտրոնային փոստի հասցե,
 - բջջային հեռախոսահամար:Ընդ որում՝ հանրային ծառայության համարանիշը (սոցիալական քարտի համար), ՀՎՀՀ և բջջային հեռախոսահամարը կարող են օգտագործվել միայն մեկ օգտատեր ստեղծելու համար:
- 2.3. **Անձնական էջ մուտք գործելու համար** անհրաժեշտ է համակարգում լրացնել Ձեր բջջային հեռախոսահամարը և գաղտնաբառը: Գաղտնաբառը մոռանալու կամ փոփոխելու անհրաժեշտության դեպքում պետք է սեղմել համապատասխան կոճակը և հետևել Ձեր բջջային հեռախոսահամարին կամ էլեկտրոնային հասցեին ուղարկված հաղորդագրության գործողություններին:
- 2.4. Ձեր անձնական էջում մուտքագրված տվյալները կարող են ցանկացած ժամանակ փոփոխվել Ձեր կողմից: Փոփոխման ենթակա չէ Ձեր սոցիալական քարտի համարը/հանրային ծառայության համարանիշը:
- 2.5. Անձնական էջում «*Համաձայն եմ*», «*Ընդունում եմ*», «*Հաստատում եմ*» և համաձայնություն արտահայտող այլ կոճակների նշումը հավաստում է, որ գիտակցել եք, որ էլեկտրոնային եղանակով ներկայացնում եք համապատասխան պայմանագրերով, հայտերով, գործարքներով և այլ փաստաթղթերով պարտավորված լինելու, ինչպես նաև այդպիսի գործարքների համար վճարելու Ձեր համաձայնությունը և մտադրությունը: Ձեր համաձայնությունը և մտադրությունը մասնավորապես վերաբերում է բոլոր այն գործողություններին և գրառումներին, որոնք Դուք կատարում եք Ձեր անձնական էջում:
- 2.6. Այդպիսի գործողությունները և գրառումները կարող են ներառել, սակայն չեն սահմանափակվում հետևյալով՝

- 2.6.1. **փաստաթղթերի ներբեռնում**, ինչը նշանակում է, որ Դուք համապատասխան փաստաթուղթը ներկայացրել եք Բանկին, ընդ որում՝ համապատասխան փաստաթուղթ ներբեռնելը կհամարվի, որ Դուք հաստատում եք, որ այդ փաստաթղթերը վավեր են, համապատասխանում են դրանց բնօրինակին և դրանցով նախատեսված տեղեկությունները լիովին ճիշտ են և արժանահավատ,
- 2.6.2. **«Մուտքագրել կողք»** դաշտում համապատասխան կողի մուտքագրում, **«Ընդունել և ստորագրել»** կամ նմանատիպ այլ կոճակների սեղմում, համապատասխան դաշտերում **«V»** նշանի մուտքագրում, որոնք նշանակում են, որ Դուք կարդացել, ծանոթացել, համաձայնել, ընդունել, ստորագրել եք համապատասխան պայմանագրերը, պայմանները, համաձայնությունները, տեղեկանքները, այլ փաստաթղթերն ու տեքստերը և պարտավորվում եք պատշաճ և ժամանակին կատարել դրանցով նախատեսված պայմանները,
- 2.6.3. Ձեր անձնական էջում այլ գործողությունների և գրառումների կատարում, որոնք առաջացնում են համապատասխան գործողության կամ գրառման կատարմամբ ենթադրվող հետևանքներ:
- 2.7. Դուք պատասխանատվություն եք կրում անձնական էջում գործողությունների իսկության, ամբողջականության, արժանահավատության և դրանից բխող հետևանքների համար: Ձեր անձնական էջում կատարվող գործողությունները Բանկի կողմից դիտարկվելու են որպես Ձեր կամքի ուղղակի և իրական արտահայտում: Բանկը պատասխանատվություն չի կրում Ձեր կողմից կատարված տպագրական և այլ սխալների համար:
- 2.8. Դուք պարտավորվում եք՝
 - 2.8.1. պահպանել անձնական էջ մուտք գործելու համար անհրաժեշտ տեղեկությունների գաղտնիությունը, չհրապարակել կամ երրորդ անձանց որևէ կերպ հայտնի չդարձնել Ձեր անձնական էջի բացման և շահագործման համար օգտագործվող գաղտնաբառերը, կոդերը և այլ տվյալները, կամ կատարել գործողություններ, որոնք կարող են հանգեցնել այդպիսի տվյալները երրորդ անձանց հայտնի դառնալուն,
 - 2.8.2. Բանկին անհապաղ հայտնել համապատասխան լիազորություն չունեցող անձանց կողմից Ձեր անձնական էջ մուտք գործելու կամ նման փորձի մասին և/կամ Ձեր անձնական էջի միջոցով գործարք կատարելու կամ նման փորձի մասին,
 - 2.8.3. հատուցել Բանկի բոլոր այն ծախսերը, կորուստներն ու վնասները, որոնք առաջացել են Ձեր կողմից պայմանագրային պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու կամ Բանկի կողմից Ձեր անձնական էջի միջոցով Ձեզանից ստացված ցանկացած հանձնարարական կատարելու արդյունքում:
- 2.9. Բանկն իրավունք ունի՝
 - 2.9.1. միակողմանիորեն փոփոխել Ձեր անձնական էջի միջոցով մատուցվող ծառայությունները և/կամ դրանց մատուցման ձևը և/կամ կարգը կամ դադարեցնել մատուցվող ծառայությունները՝ ծանուցելով Ձեզ անձամբ կամ իր ինտերնետային կայքէջում այդ մասին հրապարակելով,
 - 2.9.2. սեփական նախաձեռնությամբ ժամանակավորապես, ամբողջովին կամ մասամբ դադարեցնել Ձեր անձնական էջի միջոցով ծառայությունների մատուցումը՝ համակարգի տեխնիկական սպասարկում իրականացնելու կամ վերջինիս անվտանգությունը, հուսալիությունը և անխափան աշխատանքն ապահովելու նկատառումներով,
 - 2.9.3. կասեցնել կամ դադարեցնել Ձեր անձնական էջի օգտագործումը սույն Պայմանների խախտմամբ այն օգտագործվելու դեպքում, ինչպես նաև այն դեպքում, երբ Բանկը հիմքեր ունի ենթադրելու, որ Ձեր անձնական էջն օգտագործվում է երրորդ անձանց կողմից,
 - 2.9.4. փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ նկատառումներից ելնելով՝ չկատարել կամ կասեցնել Ձեր կողմից Ձեր անձնական էջի միջոցով ներկայացված հանձնարարականների կատարումը, որոնց վավերականությունը և/կամ օրինականությունն ակնհայտ չէ կամ կիրառել Ձեր անձնական էջի օգտագործման այլ սահմանափակումներ:

3. Վարկային հայտի ներկայացում և վարկային պայմանագրի կնքում

- 3.1. Վարկային հայտ Բանկ ներկայացնելու համար անհրաժեշտ է Ձեր Անձնական էջում լրացնել պահանջվող տեղեկատվությունը: Հայտը Բանկ ուղարկելուց հետո, Բանկի կողմից մի քանի րոպեի ընթացքում Անձնական

Էջում Դուք կստանաք հաղորդագրություն վարկի հաստատման, մերժման կամ լրացուցիչ ուսումնասիրության անհրաժեշտության մասին:

- 3.2. Վարկի հաստատման դեպքում հաճախորդը պետք է ընդունի/ստորագրի վարկի պայմանները վարկի հաստատումից 7 (յոթ) օրացուցային օրվա ընթացքում, այլապես հայտը ավտոմատ կչեղարկվի:
- 3.3. Վարկի պայմանների ընդունումը/ստորագրումը կարող է իրականացվել 2 եղանակով՝
 - Անձնական էջի միջոցով
 - Բանկ այցելելու միջոցով

4. Անձնական էջի միջոցով Վարկի և այլ հարակից բանկային ծառայությունների պայմանների ընդունում

- 4.1. Այս եղանակով Վարկի և հարակից այլ բանկային ծառայությունների պայմանների ընդունման համար հաճախորդը պետք է պատշաճ նույնականացվի: Նույնականացվելու համար անհրաժեշտ է ունենալ ֆիզիկական անձի դեպքում «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի կողմից թողարկված վճարային քարտ, որն ակտիվ կարգավիճակում է, իսկ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տրված նույնականացման քարտ և վերջինիս հետ աշխատելու համար նախատեսված և էլեկտրոնային փաստաթղթերը էլեկտրոնային թվային ստորագրությամբ ստորագրելու, առցանց էլեկտրոնային ծառայություններից օգտվելու համար կիրառվող ընթերցող սարք: Անձնական էջի համապատասխան դաշտում անհրաժեշտ է լրացնել «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի կողմից թողարկված Քարտի համարը և վավերության ժամկետը: Ձեր Բանկում գրանցված հեռախոսահամարին Բանկի կողմից ուղարկվում է ՍՄՍ հաղորդագրություն, որում նշվում է մեկանգամյա օգտագործման կոդը: Ճիշտ կոդը մուտքագրած հաճախորդը համարվում է պատշաճ նույնականացված: Վարկի և հարակից այլ բանկային ծառայությունների պայմանների ընդունումից հետո վարկը կտրամադրվի Ձեր հաշվեհամարին կամ նոր բացված հաշվեհամարին՝ համաձայն Ձեր վարկային պայմանագրի դրույթների:

5. Բանկ այցելելու միջոցով վարկի և հարակից այլ բանկային ծառայությունների պայմանների ընդունում

- 5.1. Այս եղանակով վարկի և հարակից այլ բանկային ծառայությունների պայմանների ընդունման համար հաճախորդը պետք է նույնականացվի: Նույնականացվելու համար անհրաժեշտ է այցելել Բանկ՝ ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ: Վարկի և հարակից այլ բանկային ծառայությունների պայմանները ստորագրելուց հետո վարկը կտրամադրվի Ձեր հաշվեհամարին կամ նոր բացված հաշվեհամարին՝ համաձայն Ձեր վարկային պայմանագրի դրույթների:

6. Այլ պայմաններ

- 6.1. Բանկի կողմից Ձեր անձնական էջի (profile) վրա կարող է տեղադրվել Բանկի կամ վերջինիս հետ համագործակցող Բանկի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը և հեղինակային իրավունքով պաշտպանվող այլ առարկաներ: Բոլոր այդ առարկաները պաշտպանված են ՀՀ օրենքներով և միջազգային պայմանագրերով և դրանց ապօրինի օգտագործումը կարող է հանգեցնել Ձեր նկատմամբ պատասխանատվության միջոցների կիրառմանը:
- 6.2. Դուք համաձայնվում եք փոխհատուցել Բանկի կրած վնասները, եթե Ձեր անձնական էջն օգտագործեք ոչ պատշաճ կամ սույն Պայմանների խախտմամբ:
- 6.3. Սույն Պայմաններին համաձայնություն տալը Բանկի համար չի առաջացնում Ձեզ վարկ տրամադրելու կամ այլ ծառայություն մատուցելու պարտավորություն:
- 6.4. Սույն Պայմանները Ձեզ համար ուժի մեջ են մտնում դրանց համաձայնելու պահից: Պայմանների փոփոխություններն ուժի մեջ են մտնում այդ մասին ծանուցելու պահից, այդ թվում՝ փոփոխությունները Բանկի ինտերնետային կայքում հրապարակելուց հետո: